Համագործակցության հուշագիր

ք. Գյումրի 30.05.2022թ.

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Համալսարան), ի դեմս Համալսարանի ռեկտոր Երվանդ Սերոբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից և «Կանանց իրավունքների տուն» կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս Կազմակերպության նախագահ Կարինե Դավթյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կարևորելով գործընկերության և համագործակցության դերը կրթական ոլորտում, կնքեցին սույն հուշագիրը (այսուհետ՝ հուշագիր) հետևյալի մասին.

1. Սույն Հուշագրի առարկան Համալսարանում գործող կրթական ծրագրերի (այսուհետ՝ կրթական ծրագիր) բարելավման իրականացումն է:

2. Սույն Հուշագրի շրջանակներում Կողմերը համաձայնվում են՝

2.1 Համատեղ մշակել Համալսարանի կողմից իրականացավող կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված առաջարկություններ.

2.2. Կրթական ծրագրերի մշակման և իրականացման գործում Համալսարանի մասնագետների հետ համատեղ ներգրավել նաև Կազմակերպության առավել փորձառու աշխատողներին.

2.3. Կրթական ծրագրերով ուսումնառողների ուսումնական պրակտիկաները կազմակերպել և անցկացնել Կազմակերպությունում՝ սահմանված կարգով Համալսարանի կողմից ուղեգրման դեպքում.

2.4. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում առաջադրել և ներգրավել Կազմակերպության համապատասխան մասնագետների.

2.5. Կազմակերպել և անցկացնել համատեղ սեմինարներ, քննարկումներ, իրազեկող ոչ ֆորմալ հանդիպումներ, վերապատրաստումներ:

3. Կողմերը պայմանավորվում են, որ.

3.1. Կազմակերպությունը կարող է տրամադրել անվճար սոցիալական, իրավաբանական և հոգեբանական խորհրդատվություններ ուսանողներին, անհրաժեշտության դեպքում նաև դասախոսական կազմին,

3.2. Կազմակերպությունը կարող է աշխատանքի ընդունման և մրցունակ ինքնակենսագրական կազմելու հարցերով աջակցել Համալսարանի ուսանողներին,

3.3. Կազմակերպությունը և Համալսարանը կարող են համատեղ մշակել մագիստրոսական թեզերի թեմաները, որոնք պետք է համապատասխանեն Կազմակերպության կողմից Համալսարանի շրջանավարտներին առաջարկվող աշխատանքների բնույթին:

3.4 Կազմակերպությունը կարող է աջակցել ուսանողների մասնագիտական աճի և հմտությունների զարգացմանը, ինքնակատարելագործմանը, ինչպես նաև ծրագրային չափորոշիչներին համապատասխանող ուսանողների՝ սեփական գաղափարների իրագործման հնարավորությունների ընձեռմանը:

3.5 Կազմակերպությունը կարող է հնարավորություն ընձեռել Համալսարանի ուսանողների մինչև մեկամսյա պրակտիկայի անցկացմանը՝ համապատասխան մասնագիտություններով (սոցիալական աշխատող, հոգեբան, իրավաբան և այլն):

3.6. Կազմակերպությունը պարբերաբար՝ Համալսարանի հետ նախապես համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան, կազմակերպում է բաց դռների օր Համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համար՝ Կազմակերպության կողմից իրականացվող գործառույթները և կատարվող աշխատանքները ներկայացնելու նպատակով:

3.7. Գործնական պարապմունքների կազմակերպում և իրականացում Կազմակերպության կողմից:

4. Կազմակերպությունը և Համալսարանը նպատակահարմար են գտնում մշտապես քննարկել և մշակել համագործակցության առավել արդյունավետ այլ ձևաչափեր կրթական ծրագրի կատարելագործման և գործարար մակարդակում դրանց կիրառման նպատակով:

5. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է անժամկետ:

6. Սույն հուշագիրը Կողմերի վրա լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ չի դնում: Առանձին ծրագրերի, միջոցառումների կամ համատեղ գործունեության այլ տեսակների իրականցման դեպքում, որոնք կհանգեցնեն լրացուցիչ ֆինանսական պարտավորությունների, Կողմերը կարող են կնքել համապատասխան համաձայնագիր:

7. Սույն Հուշագիրը կարող է լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, այդ մասին առնվազն երկու ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

8. Սույն Հուշագիրը կնքված է հայերով, երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

9. Կողմերի հասցեները և ստորագրությունները.

Համալսարան	Կազմակերպություն
«Ծիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ	«Կանանց իրավունքների տուն» հասարակական կազմակերպություն
Հասցե՝ ք. Գյումրի, Պարույր Սևակի 4	Հասցե՝ ք. Գյումրի, Տերյան 94ա
Ռեկտոր Երվանդ Սերոբյան	Նախագահ՝ Կարինե Դավթյան
Կ.Տ.	Կ.Տ.